«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»ԾՐԱԳՐԻ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 09.04.01.02) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՁԵՎՈՎ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՈՒՀ ՆԳՆ ԿՀ-2026 Ս-ԲՄԿ-1

ք. Երևան « 12 » 01 ---------- 2026թ.

ՀՀ Ներքին գործերի նախարարությունը՝ ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ Պատվիրատու) մի կողմից, և «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս ռեկտոր Մ.Մուրադյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ սուբսիդիա ստացող)՝ մյուս կողմից, համաձայն ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին » N 1910-Ն որոշման, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով կազմակերպությունը պարտավորվում է «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» (բյուջետային դասակարգման 09.04.01.02) ծրագրի իրականացման աշխատանքները (այսուհետ ՝ աշխատանքներ) կատարել սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Նախարարությունը պարտավորվում է աշխատանքների իրականացման համար Կազմակերպությանը տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պետության կողմից սուբսիդիայի հատկացման ձևով դրամական միջոցներ:

1.2 Կազմակերպությունը պարտավոր է աշխատանքներն իրականացնելիս ստացված և գաղտնի ճանաչված տեղեկություններն օգտագործել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

1.3 Աշխատանքներն իրականացվում են Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N1-ին և Հավելված N2-ին համապատասխան:

2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1 Օգտագործել աշխատանքների արդյունքները,

2.1.2 Կազմակերպությունից պահանջել ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ հավելված N1-ում նշված բովանդակությանը համապատասխան,

2.1.3 Կազմակերպությունից պարբերաբար պահանջել և ստանալ տեղեկատվություն սույն Պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.4 Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կազմակերպության կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները:

2.1.5 Վերահսկել Կազմակերպությանը սուբսիդիայի հատկացման ձևով դրամական միջոցների նպատակային օգտագործումը,

2.1.6 Կազմակերպությունից պահանջել աշխատանքները կատարել սույն պայմանագրի 4-րդ կետում նշված ժամկետում:

2.2 Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝

ա. Կազմակերպությունից ընդունել կատարված աշխատանքների արդյունքը՝ ՀՀ կառավարության 2025թ. դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան,

բ. Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված և ՀՀ Ներքին գործերի նախարարի հրամանով ստեղծված կոլեգիալ կառավարման մարմնի դրական եզրակացության հիման վրա իրականացնել Կազմակերպության կողմից ներկայացված ամսական հայտերի վճարումը:

2.2.2 Իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված կարգով, ձևով ու չափերով Կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպչական օգնություն:

2.3 Կազմակերպությունը պարտավոր է

2.3.1Պայմանագրի շրջանակներում ստացված սուբսիդիայի հատկացման ձևով դրամական միջոցներն օգտագործել միայն աշխատանքների իրականացման համար,

2.3.2 Պայմանագրի շրջանակներում ստացված սուբսիդիայի հատկացման ձևով դրամական միջոցներն օգտագործել միայն աշխատանքների իրականացման համար, Նախարարության հետ համաձայնեցնել երրորդ անձանց պատկանող մտավոր գործունեության պահպանվող արդյունքների օգտագործման, դրանց օգտագործման համար իրավունքների ձեռքբերման անհրաժեշտությունը.

2.3.3 Իր ուժերով և իր հաշվին վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տված այն թերությունները, որոնք կարող են հանգեցնել ծրագրով նախատեսված միջոցառումներից շեղումների,

2.3.4 Նախարարությանն անհապաղ տեղեկացնել աշխատանքների սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին,

2.3.5 Նախարարությանը հանձնել աշխատանքների արդյունքները' չխախտելով այլ անձանց իրավունքները,

2.3.6 ՀՀ օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով և կարգով Նախարարությանը ներկայացնել ամսական, եռամսյակային, տարեկան հաշվետվություններ և տեղեկատվություն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

3.Աշխատանքների ֆինանսավորման չափը և կարգը

3.1 Ըստ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և պայմանագրին կից աշխատանքների իրականացման նախահաշիվը կազմում է 67766400 (վաթսունյոթ միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

3.2 Վճարումներն իրականացվում են Կոլեգիալ կառավարման մարմնի կողմից դրական եզրակացության առկայության պարագայում Նախարարության կողմից աշխատանքների ընդունվելուց հետո ՝ հինգ բանկային օրվա ընթացքում:

3.3. Կրթահամալիրի միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած (ըստ որոշման 4-րդ կետի 6-րդ ենթակետի) ոչ նպատակային ծախսված և սուբսիդիայի գումարի չծախսված միջոցները հաշվետու տարվա վերջում վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, տարածվում է 2026թ հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

5. Աշխատանքների ընդունման և հանձնման կարգը

5.1 Աշխատանքների իրականացման ընթացիկ և վերջնական արդյունքները Կազմակերպության կողմից հանձնվում և Նախարարության կողմից ընդունվում են Կոլեգիալ կառավարման մարմնի դրական եզրակացության հիման վրա:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Վեճերի լուծման կարգը

7.1 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

8.1 Կազմակերպությունն իրավունք չունի առանց Նախարարության գրավոր համաձայնության այլ Կազմակերպություններին, հիմնարկներին և երրորդ անձանց հանձնել Պայմանագրի շրջանակներում կատարված Աշխատանքների արդյունքները:

8.2 Աշխատանքների կատարմանը երրորդ անձինք կարող են ներգրավվել միայն Նախարարության համաձայնությամբ:

8.3 Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ գործողության դադարեցումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

8.4 Պայմանագիրը կնքված է 2(երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները՝

Պ ա տ վ ի ր ա տ ու՝	Կ ա տ ա ր ո ղ՝
ՀՀ ՆԳՆ	«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 130	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02882913	ՀՎՀՀ 01361716
Հ/Հ 900011050243	Հ/Հ 900018005018
ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար՝	ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր՝
---------- Ա.Ֆիդանյան	---------- Մ.Մուրադյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 2

«___»_____ 2026թ. կնքված

N ՀՀ ՆԳՆ ԿՀ-2026 Մ-ԲՄԿ-1

պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ.դրամ/

NN	Ծառայության անվանումը	Ֆինանսավորումը 2026թ. ընթացքում՝ ՀՀ 2026թ. պետական բյուջեից /աճողական կարգով/												Ընդամենը տարեկան
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն /Սուբսիդիա/	5 647.0	11 294.0	16 941.6	22 588.6	28 235.6	33 883.2	39 530.2	45 177,2	50 824.8	56 471.8	62 118.8	67 766.4	67 766.4

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ ՆԳՆ	«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 130	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 02882913	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ ՀՎՀՀ 01361716
Հ/Հ 900011050243	Հ/Հ 900018005018
ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար	ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր՝
---------- Ա.Ֆիդանյան	---------- Մ.Մուրադյան
Կ.Տ	